

Արդար Դատավարության
Ընթացքը 3 Տարեկան և
Բարձր Բաժանորդների
Համար



DDS

Զարգացման Ծառայությունների Բաժին

2006 թվականի Հոկտեմբեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է Արդար Դատավարության Ընթացքը 1

Արդյոք Հնարավո՞ր է Հարցը Առանց Արդար Դատավարության Որոշելի 2

Ո՞րն են Արդար Դատավարության Ընթացքը Սկսելու Ժամկետները 2

Ի՞նչ Կպատահի Արդար Դատավարության Մասին Պահանջս Ներկայացնելուց Հետո..... 2

Արդար Դատավարության Յուրաքանչյուր Փուլում Ես Ի՞նչ Իրավունքներ Ունեմ..... 3

Այս Ընթացքում Ինչպե՞ս Ես Կարող եմ Օգնություն Ստանալ..... 3

Ոչ Պաշտոնական Կամավոր Ժողովը Ինչպե՞ս է Ծրագրավորվում 3

Ոչ Պաշտոնական Կամավոր Ժողովի Ընթացքում Ի՞նչ է Պատահում 4

Ինչպես և Երբ Ինձ Կտեղեկացնեն Տարածքային կամ Զարգացման Նահանգային Կենտրոնի Ոչ
 Պաշտոնական Ժողովի Որոշման Մասին..... 4

Ի՞նչ Պետք է Ձեռնարկեմ Եթե Համամիտ Չեմ Տարածքային կամ Զարգացման Նահանգային Կենտրոնի
 Ընդունված Որոշմանը 4

Ինչպե՞ս է Միջնորդությունը Ծրագրավորվում..... 4

Ի՞նչ Պետք է Ձեռնարկեմ Եթե Ինձ Անհրաժեշտ է Փոփոխել Միջնորդության Համար Ծրագրավորված
 Ժամկետը..... 5

Ի՞նչ է Իրենից Ներկայացնում Միջնորդությունը 5

Ի՞նչ Կպատահի Եթե Միջնորդության Միջոցով Հարցը (Հարցերը) Չորոշվի..... 6

Ինչպե՞ս է Արդար Դատավարությունը Ծրագրավորվում..... 6

Ի՞նչ Պետք է Ձեռնարկեմ Եթե Ինձ Անհրաժեշտ է Արդար Դատավարության Համար Ծրագրավորված
 Ժամկետը Փոփոխել..... 6

Ի՞նչ է Իրենից Ներկայացնում Արդար Դատավարությունը..... 7

Ինչպես և Երբ Ինձ Կտեղեկացնեն Արդար Դատավարության Որոշման Մասին..... 7

Ի՞նչ Օրենքներ և Կնոնադրություններ են Կիրառվում Արդար Դատավարության Ընթացքի Վերաբերյալ8

Ի՞նչ է Արդար Դատավարության Ընթացքը

Այս գրքույկում նկարագրված արդար դատավարության ընթացքը դա տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի և **3 տարեկան և բարձր** բաժանորդների կամ հայցվորների միջև առաջացած տարաձայնությունները լուծելու ընթացքն է: 3 տարեկան և ցածր բաժանորդներին կամ հայցվորներին ընդգրկող տարաձայնությունների դեպքում դիմեք **Վաղաժամ Սկզբի Ընթացքում Ծնողների Իրավունքներին (Parents' Rights in Early Start)**, որը մատչելի է տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնից:

Համապատասխան արդար դատավարության ընթացքին տարաձայնությունները կարող են առաջանալ ծառայությունների, համապատասխան լինելու կամ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի որևէ որոշման կամ գործողության վերաբերյալ, որոնց հետ դուք համամիտ չեք: Արդար դատավարության ընթացքը ընդգրկում է ոչ պաշտոնական կամավոր ժողովներ, միջնորդություն և արդար դատավարություն:

Ոչ պաշտոնական կամավոր ժողովները անցկացվում են տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենի կամ իր ներկայացուցչի կողմից ձեր և ձեր լիազորված ներկայացուցչի մասնակցությամբ՝ եթե այդպիսին գոյություն ունի: Ոչ պաշտոնական կամավոր ժողովի նպատակն է փորձել վճռել բողոքարկման ներկայացված հարցը: Դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը կարող եք ոչ պաշտոնական ժողովից հրաժարվել:

Եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը հրաժարվեք ոչ պաշտոնական կամավոր ժողովից կամ բավարարված չեք ոչ պաշտոնական ժողովից հետո տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից ընդունված որոշումով և դեռևս միջնորդություն չեք պահանջել, ապա դուք կարող եք միջնորդություն պահանջել կամ հարցը ուղղակիորեն ներկայացնել արդար դատավարությանը:

Եթե միջնորդություն պահանջեք, ապա տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը կարող են պահանջը ընդունել կամ մերժել: Եթե պահանջը ընդունվի, ապա միջնորդությունը ոչ պաշտոնական կարգով կվարի Office of Administrative Hearing -ի կողմից ներկայացված միջնորդը: Դուք, ձեր լիազորված ներկայացուցիչը և նմանապես տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը կարող եք ցանկացած ժամանակ միջնորդության ընթացքից դուրս գալ և անցնել արդար դատավարության ընթացքին:

Եթե դուք, ձեր լիազորված ներկայացուցիչը կամ տարածքային կամ էլ զարգացման նահանգային կենտրոնը միջնորդությունից հրաժարվեք կամ եթե հարցը կամ հարցերը միջնորդության միջոցով հնարավոր չէ վճռել ի բավարար ձեզ կամ ձեր լիազորված ներկայացուցչի, ապա գործը պետք է անցնի արդար դատավարություն:

Արդար դատավարությունը ավելի պաշտոնական է և այն կվարի Office of Administrative Hearing-Ը ՍՀՅձձձ:

Վերջնական որոշումը կկայացվի տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից Արդար Դատավարության Պահանջը ստանալուց **90 օրվա ընթացքում**: 90 օրվա այս ժամանակահատվածը կարող է երկարացվել եթե դուք միջնորդություն պահանջեք կամ պահանջեք ձեր դատավարության ընթացքի շարունակությունը կամ հետաձգումը:

Տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնից ստացած Առաջարկված Գործողության մասին Ծանուցումը եթե կիրառելի է, նշում է, թե արդյո՞ք դուք Waiver program ի մասնակից եք: Եթե Առաջարկված Գործողության մասին Ծանուցումը չեք ստացել, ապա կարող եք կապ հաստատել տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի հետ, որպեսզի պարզեք, թե արդյո՞ք Waiver program մասնակից եք, թե

ոչ: Waiver program ին ձեր մասնակցելը կամ չմասնակցելը չի ազդի ծառայությունների վրա: Եթե դուք Waiver program ի մասնակից եք և տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը ձեզ տեղեկացրել է, որ դուք այլևս Waiver program ի մասնակցության իրավունք չունեք, ապա այս փոփոխությունը չի ազդի ձեր առկա ծառայությունների վրա:

Արդյոք Հնարավո՞ր է Հարցը Ատանց Արդար Դատավարության Որոշել

Տարածայնությունները հաճախակի կարելի է վճռել ատանց արդար դատավարության: Լրացուցիչ տեղեկության կամ աջակցություն ստանալու համար, դիմեք տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի ներկայացուցչին, հաճախորդների իրավունքների խորհրդատուին, տարածքային խորհուրդին կամ խորհրդատվական այլ կազմակերպություն:

Ո՞րն են Արդար Դատավարության Ընթացքը Սկսելու Ժամկետները

Յուրաքանչյուր հայցվոր, ծառայություն ստացող անձ կամ լիազորված ներկայացուցիչ կարող է արդար դատավարության պահանջ ներկայացնել: Պահանջը պետք է լինի **գրավոր** և ձեր կամ ձեր լիազորված ներկայացուցչի մոտ տարածայնություններ առաջացնող որոշման կամ գործողության մասին ծանուցումը ստանալուց **30 օրվա ընթացքում** ներկայացվի տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոն:

Պահանջը պետք է ներկայացվի տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից տրամադրված Արդար Դատավարության մասին Պահանջի փաստաթղթի ձևի վրա:

Դուք կարող եք բանավոր կարգով տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի գործակցից խնդրել արդար դատավարություն: Գործակիցը ձեզ կներկայացնի Արդար Դատավարության մասին Պահանջի ձևը և անհրաժեշտության դեպքում ձեզ կօգնի այն լրացնել: Եթե արդար դատավարության մասին ձեր պահանջը փոստադրոշմած է կամ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը այն ստացել է ձեր կողմից տարածայնություն առաջացնող որոշման կամ գործողության մասին գրավոր ծանուցումը ստանալուց **10 օրվա ընթացքում**, ապա բողոքարկման ընթացքում դուք կշարունակեք ստանալ ընթացիկ ծառայությունները: Արդար դատավարության ընթացքում ծառայությունների շարունակումը նաև հայտնի է որպես «վերանայման ընթացքում վճարված օգնություն» (“aid paid pending”):

Ի՞նչ Կպատահի Արդար Դատավարության Մասին Պահանջս Ներկայացնելուց Հետո

Երբ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը ստանա արդար դատավարության մասին ձեր պահանջը, ապա իրենք ձեզ և ձեր լիազորված ներկայացուցչին կուղարկեն՝ եթե տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը նախքինում այն ձեզ չի ուղարկել, արդար դատավարության գրքույկի պատճեն, որտեղ ձեզ բացատրված են արդար դատավարության, միջնորդության և ոչ պաշտոնական ժողովների վերաբերյալ ձեր իրավունքները: Եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը նախորոք պահանջել եք, ապա ձեզ նաև կտեղեկացնեն ոչ պաշտոնական կամավոր ժողովի առաջարկած օրվա, ժամի և անցկացման վայրի վերաբերյալ:

Եթե միջնորդություն պահանջվի, ապա տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը միջնորդության վերաբերյալ պահանջը ստանալու օրվանից հետո իր տրամադրության տակ ունի **հինգ օր** միջնորդությունը ընդունելու կամ մերժելու համր: Եթե տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը միջնորդության մասին պահանջը մերժի, ապա այդ որոշման մասին ծանուցումը անմիջապես կուղարկվի ձեզ կամ ձեր լիազորված ներկայացուցչին:

Նույնպես, արդար դատավարության մասին ձեր պահանջը ստանալուց **հինգ օրվա ընթացքում** տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը հեռապատճեի միջոցով ձեր պահանջի պատճեն

կուղարկի Office of Administrative Hearings և, եթե միջնորդություն է պահանջված, ապա նույնպես կուղարկի Վարչական Արդարադատության Բնստիտուտ: Արդար դատավարության մասին ձեր պահանջը ստանալուն պես, Վարչական Դատավարության Գրասենյակը ձեզ կտեղեկացնի ձեր դատավարության իրավունքների վերաբերյալ: Դուք նույնպես ծանուցում կստանաք արդար դատավարության ժամի, վայրի և օրվա վերաբերյալ, խորհրդատվական աջակցության ծառայության մատչելիության և արդար դատավարությանը մասնակցող կողմերի իրավունքների և պարտականությունների մասին:

Եթե միջնորդությունը ընդունելի է, ապա Office of Administrative Hearings-ը ձեզ միջնորդության իրավունքների մասին տեղեկություն կուղարկի: Դուք նույնպես ծանուցում կստանաք միջնորդության ժամի, վայրի և օրվա վերաբերյալ, փաստաբանական աջակցության մատչելիության և արդար դատավարությանը մասնակցող կողմերի իրավունքների և պարտականությունների մասին:

Արդար Դատավարության Յուրաքանչյուր Փուլում Ես ԻՆչ Իրավունքներ Ունեմ

Յուրաքանչյուր հայցվոր, ծառայություններ ստացող անձ կամ լիազորված ներկայացուցիչ արդար դատավարության ընթացքի յուրաքանչյուր փուլում (ոչ պաշտոնական ժողովի, միջնորդության, արդար դատավարության) ունի հետևյալ իրավունքները.

- Արդար դատավարության ընթացքում որպես ձեր ներկայացուցիչ ձեզ կարող է աջակցել տեղամասի խորհրդի կողմից նշանակված անձը կամ գործակալությունը;
- Դուք կարող եք ոչ պաշտոնական ժողովի, միջնորդության և արդար դատավարության ընթացքում ներկա լինել ձեր կողմից նախընտրած ներկայացուցչի հետ;
- Դուք կարող եք գրավոր և բանավոր ապացույցներ ներկայացնել;
- Դուք կարող եք վկաներին դեմադրել կանգնել և խաչաձև հարցաքննել;
- Դուք կարող եք ներկայանալ փաստաբանի կամ ձեր կողմից նախընտրած որևէ այլ ներկայացուցչի հետ;
- Դուք կարող եք ստուգել ծառայության մատակարարման ընթացքում տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից ձեռք բերված արձանագրությունները; և
- Դուք կարող եք խնդրել, որպեսզի ձեզ թարգմանիչ տրամադրեն առանց այդ ծառայության ծախսերը վճարելու:

Այս Ընթացքում Ինչպե՞ս Ես Կարող եմ Օգնություն Ստանալ

Դուք կարող եք օգնություն ստանալ ընկերոջից, ընտանիքի անդամից, խորհրդատուից, փաստաբանից կամ ձեր կողմից նախընտրած որևէ այլ անձից: Եթե դուք աջակցություն ստանալու համար փաստաբան կամ որևէ այլ անձ վարձեք, ապա տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը պատասխանատու չէ այդ ծառայության ծախսերի համար: Երբ արդար դատավարության մասին ձեր պահանջը ստանան, ապա տարածքային կամ զարգացման միջազգային կենտրոնը պետք է նույնպես ձեզ տեղեկացնի մատչելի խորհրդատվական աջակցության ծառայությունների վերաբերյալ, ընդգրկելով նաև հաճախորդի իրավունքների խորհրդատուների, տարածքային խորհրդի և խորհրդատվական կազմակերպությունների հիշատակումը:

Ոչ Պաշտոնական Կամավոր Ժողովը Ինչպե՞ս է Օրագրավորվում

Երբ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը ստանա ձեր Արդար Դատավարության Պահանջի Ձևը, ապա անմիջապես ձեզ և ձեր լիազորված ներկայացուցչին գրավոր կարգով կտեղեկացնի արդար դատավարության ձեր իրավունքների մասին՝ եթե դրանց մասին ձեզ դեռ չեն տեղեկացրել Առաջարկված Գործողության մասին Ծանուցման մեջ: Ի լրացում, եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը պահանջեք, ապա ձեզ կտեղեկացնեն ոչ պաշտոնական ժողովի առաջարկված օրվա, ժամի և վայրի վերաբերյալ: Ոչ պաշտոնական կամավոր ժողովից առաջ դուք կամ ձեր լիազորված

ներկայացուցիչը կարող է ստուգել արձանագրությունները: Ոչ պաշտոնական կամավոր ժողովը կկայանա տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից Արդար Դատավարության մասին Պահանջի Ձևը ստանալուց **10 օրվա ընթացքում**:

Ոչ Պաշտոնական Կամավոր Ժողովի Ընթացքում Ի՞նչ է Պատահում

Ոչ պաշտոնական ժողովը կվարի տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենը կամ իր ներկայացուցիչը: Ոչ պաշտոնական ժողովը կկայանա ձեզ և ձեր լիազորված ներկայացուցչին խելամտորեն հարմար ժամին և վայրում: Այն կանցկացվի անզլերեն լեզվով, բայց անհրաժեշտության և նխորոք պահանջ ներկայացնելու դեպքում, տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը թարգմանիչ կտրամադրեն: Դուք կամ ձեր ներկայացուցիչը կարող էք հարցեր, փաստեր ներկայացնել և նաև ներկայացնել ձեր բողոքարկման պատճառները: Դուք կարող էք ցանկացած վկաներին դեմադրել կանգնել և խաչաձև հարցաքննել:

Ինչպես և Երբ Ինձ Կտեղեկացնեն Տարածքային կամ Զարգացման Նահանգային Կենտրոնի Ոչ Պաշտոնական Ժողովի Որոշման Մասին

Ոչ պաշտոնական ժողովից հետո **հինգ օրվա ընթացքում** տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը ձեզ և ձեր ներկայացուցչին կտրամադրի գրավոր որոշում: Որոշման մեջ.

- Կնշվեն ներկայացրած հարցերը;
- Վճիռ կկայացվի յուրաքանչյուր նշված հարցի վերաբերյալ;
- Ցուրաքանչյուր վճիռը հիմնավորող փաստեր կներկայացվեն;
- Կնշվեն այն օրենքները, կանոնադրությունները և կանոնավոր ուղեգծերը, որոնց հիման վրա կայացվել է յուրաքանչյուր վճիռը; և
- Կբացատրվի տարածքային և զարգացման նահանգային կենտրոնի որոշումը բողոքարկելու ընթացքը:

Եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը բավարարված եք ոչ պաշտոնական ժողովից հետո տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից ընդունված որոշումը և չեք ցանկանում դատավարությունը շարունակել, ապա ամբողջացրեք տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից տրամադրված Ընդունված Որոշման մասին Ծանուցագրի ձևը: Ընդունված Որոշման մասին Ծանուցագրի ամբողջացրած ձևը հարկավոր է հանձնել տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենին: Տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի որոշումը օրինական ուժ կստանա **տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից արդար դատավարության պահանջի Ընդունված Որոշման մասին Ծանուցագիրը ստանալուց 10 հետո**:

Ի՞նչ Պետք է Ձեռնարկել Եթե Համամիտ Չեմ Տարածքային կամ Զարգացման Նահանգային Կենտրոնի Ընդունված Որոշմանը

Եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը բավարարված չեք ոչ պաշտոնական կամավոր ժողովից հետո տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի ընդունված որոշումը, ապա գործը կանցնի միջնորդությանը՝ եթե միջնորդություն պահանջվել է և այդ պահանջը ընդունվել է, և եթե արդար դատավարության մասին պահանջը ետ չի վերցվել: Եթե միջնորդություն չի պահանջվել կամ այդ պահանջը չի ընդունվել, ապա գործը կշարունակվի արդար դատավարությունում:

Ինչպե՞ս է Միջնորդությունը Օրագրավորվում

Միջնորդության մասին գրավոր պահանջը ստանալուն պես, տարածքային կենտրոնին կամ զարգացման նահանգային կենտրոնին կհատկացվի **հինգ աշխատանքային օր** միջնորդությունը ընդունելու կամ մերժելու համար: Ձեզ, ձեր լիազորված ներկայացուցչին և Office of Administrative Hearings -

ին անմիջապես կտեղեկացնեն տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի ընդունված որոշման վերաբերյալ:

Տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի միջնորդությունը ընդունելու մասին որոշման ծանուցումը ստանալուց **հինգ օրվա ընթացքում**, Office of Administrative Hearings-ը ձեզ, ձեր լիազորված ներկայացուցչին և տարածքային կենտրոնին կամ զարգացման նահանգային կենտրոնին կտեղեկացնի հետևյալի վերաբերյալ.

- Միջնորդությունը անցկացնելու ժամի, վայրի և օրվա վերաբերյալ:
- Ձեր և տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի իրավունքների վերաբերյալ:
- Խորհրդատվական աջակցության ծառայությունների մատչելիության վերաբերյալ:
- Վեճին միջնորդող անձի կամ գրասենյակի անվան, հասցեի և հեռախոսահամարի վերաբերյալ:

Միջնորդությունը պետք է անցկացվի տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից Արդար Դատավարության մասին Պահանջը ստանալուց **30 օրվա ընթացքում**:

Ի՞նչ Պետք է Ձեռնարկել Եթե Ինձ Անհրաժեշտ է Փոփոխել Միջնորդության Համար Ծրագրավորված Ժամկետը

Դուք կարող եք խնդրել, որպեսզի միջնորդությունը հետաձգեն: Ձեր պահանջը հնարավոր է, որ շնորհվի ըստ միջնորդող անձի հայեցողության: Եթե միջնորդությունը հետաձգելու մասին ձեր պահանջը շնորհվի, ապա միջնորդության խորհրդակցության ժամկետը կփոփոխվի և արդար դատավարության որոշումը ընդունելու ժամկետը կարող է երկարացվել:

Ի՞նչ է Իրենից Ներկայացնում Միջնորդությունը

Միջնորդությունը դա վեճի կողմերի կամավոր ժողով է չեզոք անձի (միջնորդի) մասնակցությամբ, որը ունի վերապատրաստում և փորձ մարդկանց միջև առաջացած հակասությունները լուծելու համար: Սա վճիռը ընկերական կարգով որոշելու ճանաչված ձև է և հաճախակի օգտագործվում է բազմաթիվ բնագավառներում: Միջնորդը թեթևացնում է ոչ պաշտոնական, ոչ թշնամական ժողովի ընթացքը, որտեղ կողմերին հնարավորություն և լիազորություն է հատկացված որոշման համար համաձայնություն տալու: Միջնորդը կողմերին աջակցում է փաստերը, վիճելի հարցերը և բողոքարկման պատճառները քննարկելու, ինչպես նաև աջակցում է հասնելու երկու կողմերի համար ընդունելի որոշում կայացնելու նպատակին:

Միջնորդության ընթացքում միջնորդը կարող է առանձին և գաղտնի կարգով հանդիպել միջնորդության ընթացքին մասնակցող յուրաքանչյուր անձին կամ խմբին: Սա երբեմն կոչվում է «առաջնորդների հանդիպում» (“meeting in caucus”): Միջնորդը դատավորի գործունեություն չի վարում և այդ պատճառով վեճերը միջնորդության օգնությամբ որոշվում են միայն այն դեպքում, երբ կողմերը բոլորի կողմից ընդունելի համաձայնության են գալիս: Քանի որ միջնորդությունը կամավոր է, այդ պատճառով դուք, ձեր լիազորված ներկայացուցիչը կամ տարածքային կենտրոնը կամ զարգացման նահանգային կենտրոնը կարող եք ցանկացած պահին որոշել առանց միջնորդության անցնելու դատավարության ընթացքին: Միջնորդը կհատկացվի Office of Administrative Hearings -ի կողմից (McGeorge Իրավաբանական Համալսարանի ծրագիր): Այն կանցկացվի անգլերեն լեզվով, բայց անհրաժեշտության դեպքում և եթե նախորոք պահանջվել է, Office of Administrative Hearings -ը կհատկացնի թարգմանիչ:

Եթե միջնորդության միջոցով եկել էք համաձայնության և այլևս չեք ցանկանում դատավարությունը շարունակել, ապա դուք պետք է ամբողջացնեք տարածքային կենտրոնի, միջնորդի կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից ներկայացված Ընդունված Որոշման մասին Ծանուցագիրը: Ընդունված Որոշման մասին ամբողջացրած Ծանուցագիրը պետք է հանձնեք տարածքային կենտրոնի կամ

ցարգացման նահանգային կենտրոնի տնօրենին: Միջնորդության ընթացքում ընդունված վերջնական որոշումը օրինական ուժ կստանա **տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից արդար դատավարության պահանջի Հնդունված Որոշման մասին Ծանուցագիրը ստանալուց 10 օր հետո:**

Ի՞նչ Կպատահի Եթե Միջնորդության Միջոցով Հարցը (Հարցերը) Չորոշվի

Եթե հարցը կամ հարցերը միջնորդության միջոցով ձեր կամ ձեր լիազորված ներկայացուցչի համար բավարար կարգով չորոշվի, ապա դրանք կներկայացվեն արդար դատավարությանը: Միջնորդը միջնորդության արդյունքների վերաբերյալ անմիջապես կտեղեկացնի Office of Administrative Hearing-Գ ԻձՕՍՀՕ:

Ինչպե՞ս է Արդար Դատավարությունը Ծրագրավորվում

Երբ արդար դատավարության մասին ձեր պահանջը ստանա, ապա Office of Administrative Hearing-Ա ձեզ, ձեր լիազորված ներկայացուցչին և տարածքային կենտրոնին կամ զարգացման նահանգային կենտրոնին անմիջապես գրավոր կտեղեկացնի հետևյալի վերաբերյալ.

- Արդար դատավարության ժամի, վայրի և օրվա վերաբերյալ;
- Ձեր իրավունքների՝ այս գրքույկի 3րդ էջում նշված իրավունքները ներառյալ, և տարածքային կենտրոնի և զարգացման նահանգային կենտրոնի իրավունքների վերաբերյալ;
- Խորհրդատվական աջակցության ծառայության մատչելիություն վերաբերյալ; և
- Արդար դատավարությունը վարող անձի կամ գրասենյակի անունը, հասցեն և հեռախոսահամարը:

Արդար դատավարությունը կկայանա տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից Արդար Դատավարության մասին պահանջը ստանալուց **50 օրվա ընթացքում:** Դուք, ձեր լիազորված ներկայացուցիչը կամ տարածքային կենտրոնը կամ զարգացման նահանգային կենտրոնը կարող եք լրացուցիչ ժամանակ խնդրել: Վերջնական վարչական որոշումը պետք է ընդունվի տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից արդար դատավարության ամսին պահանջը ստանալուց **90 օրվա ընթացքում:**

Ի՞նչ Պետք է Ձեռնարկեմ Եթե Ինձ Անհրաժեշտ է Արդար Դատավարության Համար Ծրագրավորված Ժամկետը Փոփոխել

Դուք, հիմնված պատճառ ունենալու դեպքում, կարող եք խնդրել, որպեսզի դատավարությունը հետաձգեն: Վարչական Օրենքի Դատավորը կորոշի, թե արդյոք ձեր պահանջի շնորհի: Եթե արդար դատավարությունը հետաձգելու մասին ձեր պահանջը շնորհվի, ապա դատավարության ժամկետը կփոփոխվի և որոշում ընդունելու համար հատկացված ժամկետը կարող է երկարացվել: Տարածքային կենտրոնը կամ զարգացման նահանգային կենտրոնը նույնպես կարող են խնդրել, որպեսզի արդար դատավարության ժամկետը հետաձգվի: Տարածքային կենտրոնի կամ զարգացման նահանգային կենտրոնի պահանջին համաձայն ժամկետի հետաձգումը չի երկարացնի Վարչական Օրենքի Դատավորի կողմից որոշում ընդունելու ժամկետը:

Արդար դատավարությունը կկայանա ձեր և ձեր լիազորված ներկայացուցչի համար խելամոռեն հրամար ժամին և վայրում: Դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը և տարածքային կենտրոնը կամ զարգացման նահանգային կենտրոնը պետք է համաձայնության գաք արդար դատավարությունը անցկացնելու վայրի վերաբերյալ: Արդար դատավարությունը կկայանա անգլերեն լեզվով: Անհրաժեշտության դեպքում և եթե նախորոք պահանջվել է, Office of Administrative Hearing-Գ ՍՀԶձձձ

կհատկացնի թարգմանիչ:

Ի՞նչ է Իրենից Ներկայացնում Արդար Դատավարությունը

Արդար դատավարությունը կարող է նմանվել դատական դատավարությանը՝ ընդգրկելով վկաներին, իրեղեն ապացույցներ և ապացույց ներկայացնելու կանոնները: Արդար դատավարությունը հարկավոր չէ վարել ապացույց ներկայացնելու մասնագիտական կանոններին և վկաններ ներկայացնելու կանոններին համաձայն: Վարչական Օրենքի Դատավորը կնախագահի: Դատավորը աշխատում է Office of Administrative Hearing-ձՏԱ և ոչ թե տարածքային կենտրոնում կամ զարգացման նահանգային կենտրոնում:

Արդար դատավարության ընթացքում դուք կարող եք ձեր շահերը ներկայացնել: Ձեր շահերը նույնպես կարող է ներկայացնել փաստաբանը, խորհրդատուն, ընտանիքի անդամը, ընկերը կամ ձեր նախընտրած անձը: Եթե փաստաբան կամ որևէ այլ անձ վարձեք, ապա այդ ծառայության ծախսերի համար պատասխանատու անձը դուք եք: Ղեկավարող աշխատակազմը կամ ներկայացուցիչը սովորաբար ներկայացնում է տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի շահերը:

Արդար դատավարությունից առնվազն հինգ օր առաջ դուք և տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը պետք է իրար հետ փոխանակեք վկանների ցուցակը, յուրաքանչյուր վկայի ցուցմունքի բովանդակությունը և ներկայացվող բոլոր փաստաթղթային ապացույցների պատճենները: Եթե տեղեկությունը նախորոք չի ներկայացվել, ապա Վարչական Օրենքի դատավորը հնարավոր է, որ թույլ չտա այդ տեղեկության օգտագործումը դատավարության ընթացքում: Եթե ստացած տեղեկությունը ձեզ համար անհասկանալի է, ապա դուք կարող եք աջակցություն պահանջել ցանկացած խորհրդատուից:

Յուրաքանչյուր կողմ իր հայցը ապացուցելու նպատակով կարող է առաջարկել գործին վերաբերվող ապացույց: Երկու կողմերն էլ կարող են ընդգրկված վիճելի հարցերի վերաբերյալ տեղեկություն ունեցող վկաններ և փաստաթղթեր ներկայացնել, ինչպիսիք ծառայության արձանագրությունները կամ բժշկական զեկույցներն են: Դուք, ցանկալի է, որ փորձեք, որպեսզի վկաները դատավարությանը կամավոր ներկայանան, սակայն դուք իրավունք ունեք գործին վերաբերվող փաստաթղթերը կամ մարդկանց արդար դատավարությանը ներկայացնել դատական ծանուցագրի միջոցով: Եթե վկաներին դատական ծանուցագիր ուղարկեք, ապա, հնարավոր է, որ դրա հետ կապված ծախսեր և/կամ վճարումներ առաջանան, որոնց համար դուք եք պատասխանատու: **Դատական ծանուցագրեր ձեռք բերելու համար դիմեք Office of Administrative Hearing-ՇԿ արդար դատավարության օրվանից բավական ժամանակ առաջ:** Բոլոր ցուցմունքները կտրվեն երդում կամ հաստատում ընդունելուց հետո: **Մինչ արդար դատավարության եզրափակումը, դուք պետք է հանձնեք բոլոր այն ապացույցները, որոնք ցանկանում եք, որ հաշվի առնվեն Վատրչական Օրենքի Դատավորի կողմից:** Բոլոր ցուցմունքները լսելուց հետո, յուրաքանչյուր կողմ կարող է ներկայանալ ապացույցների միջոցով հայտնաբերված փաստերը հասցեագրող եզրափակիչ փաստարկումներով:

Ինչպես և Երբ Ինձ Կտեղեկացնեն Արդար Դատավարության Որոշման Մասին

Վարչական Օրենքի Դատավորի որոշումը կընդգրկի.

- Փաստերի համառոտ շարադրանքը;
- Հիմնական ապացույցների հայտարարությունը;
- Յուրաքանչյուր վիճելի հարցի վերաբերյալ ընդունված որոշումը;
- Որոշումը հիմնող օրենքները, կանոնադրությունները և կանոնավոր ուղեգծերը;
- Ծանուցագիր, որ սա վարչական դատավարության վերջնական որոշումն է; և
- Ծանուցագիր, որ **90 օրվա** ընթացքում դուք կամ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը

կարող եք որոշումը բողոքարկել ձեռնհաս իրավասության դատարնում:

Եթե դատավարության ընթացքում ներկայացրած գլխավոր հարցերը Waiver program ի հետ **չեն առնչվում**, ապա արդար դատավարության վերջին օրից **տաս օրվա ընթացքում** և տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից Արդար Դատավարության մասին պահանջը ստանալու օրվանից **80 օրից** ոչ ուշ, Վարչական Օրենքի Դատավորը գրավոր որոշումը կուղարկի ձեզ, ձեր լիազորված ներկայացուցչին և տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոն:

Եթե դատավարության ընթացքում առաջ բերված հարցերը **առնչվում են** Waiver program ի հետ, ապա դուք վերջնական որոշումը կստանաք Արդար Դատավարության մասին Պահանջի փոստադրոշմած օրից կամ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից այն ստանալուց հետո՝ այս երկու դեպքերից վաղաժամը, **90 օրվա ընթացքում**:

Եթե ընդունված որոշումը ձեզ անբարեհաճ է և դուք շարունակել եք ստանալ բողոքարկման առարկա հանդիսացող ծառայությունները, ապա որոշումը ի կատար կածվի միայն ձեր կամ լիազորված ներկայացուցչի կողմից ստացականը վավերացված փոստով որոշումը ստանալուց **տաս օր հետո**: Եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը անգլերեն չեք հասկանում, ապա գրավոր որոշումը ձեզ կներկայացվի անգլերեն և այն լեզվով, որը դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը հասկանում եք:

Ի՞նչ Օրենքներ և Կոնստիտյուցիաներ են Կիրառվում Արդար Դատավարության Ընթացքի Վերաբերյալ

Կալիֆորնիայի Կոնստիտյուցիաների Օրենսգրքի 17րդ Բաժինը, Հասարակական Առողջապահական 2րդ Բաժին, 1ին գլուխ, 9րդ ստորաբաժին և Լենթերմենի Զարգացման Անգործունակության Ծառայությունների մասին Օրենքը (Բարեկեցության և Հաստատությունների մասին Օրենսգիրք, 4.5 բաժանմունք, 7րդ գլուխ, 4700-4730 հոդվածներ)



Լրացուցիչ Տեղեկության Համար
Խնդրում ենք Դիմել Ձեր Տեղամասի Տարածքային կամ
Զարգացման Նահանգային Կենտրոն